ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՓՈԽՏԼՈՐԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022-2023 ուստարի

Եթե չես պլանավորում անելիքներդ, ուրեմն պլանավորում ես անհաջողություններդ

Աշխատանքն է ամեն բարիք ստեղծողը…

Երեխայակենտրոն դպրոց

Դպրոցը պետք է գիտելիք տալուց ավելի սովորեցնի դրանց գտնելու ուղիները, այսինքն՝ սովորեցնի սովորել:
Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի սովորելու.

Յուրաքանչյուր երեխայից՝ ըստ ընդունակությունների,

Յուրաքանչյուր երեխային՝ ըստ պահանջմունքների …

Ամեն ինչ երեխայի համար

Ուսուցիչը աշակերտների հետ պետք է լինի եղբայրական սիրով և այդ սերը պետք է զգան աշակերտները:

Ղ. Աղայան

Ով ուզում է դաստիարակել, նա պետք է հասկանա երեխայի պահանջները, թափանցի նրա հոգին:

Ուշինսկի

Հաջող դաստիարակության գաղտնիքը աշակերտի նկատմամբ տածած հարգանքի մեջ է:

Էմերսոն

Մի մասնիկ ժանգը ողջ ազնիվ նյութն ապականում է և իջեցնում իր անարգության:

Շեքսպիր

ԹՈՐՈՍԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին

1. Ուսումնական հաստատության կարգավիճակը.

ՀՀ շիրակի մարզի Թորոսգյուղի միջնակարգ դպրոցը պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Հիմնադիրը և կառավարման մարմինները.

Դպրոցի հիմնադիրը ՀՀ-ն է, լիազորված մարմինը՝ ՀՀ Շիրակի մարզպետարանը:

Դպրոցի տնօրենը աշխատում է 2006 թ-ից (տնօրեն է վերընտրվել ՀՀ կգ նախարարի կողմից 2000թ. դեկտեմբերի 22-ին հաստատված հանրակրթության համակարգի բարոփոխումների ծրագրում ընդգրկված հաստատության տնօրենի ընտրության կարգին համապատասխան 2009թ. Հուլիսի 21-ին): Ավարտել է Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետը:

Դպրոցի կառավարման խորհուրդը ձևավորվել է 2022թ., բաղկացած է անդամներից:

3. Շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան.

Դպրոցի գտնվելու վայրն է ՀՀ Շիրակի մարզի Թորոսգյուղը: Դպրոցը երկհարկանի կառույց է:

Դպրոցը հիմնանորոգվել է պետբյուժեի միջոցներով 2008թ.:

Դասասենյակները լուսավոր ու բարվոք,մ աքուր վիճակում են: Դպրոցն ունի 4 սանհանգույց, որոնք ապահովված են մշտական ջրով: Դպրոցում կա գրադարան, համակարգչային սենյակ, խաղասենյակ, սպրոտ դահլիճ, հանդիսությունների դահլիճ, ճաշարան, հանդերձարաններ, գործող լաբորատորիա չունենք՝ նյութատեխնիկական բազայի բացակայության պատճառով:

4. Մարդկային ռեսուրսները.

Դպրոցում աշխատում են 19 ուսուցիչ, բոլորն էլ ունեն բարձրագույն կրթություն:

5. Ինչպիսի դպրոց է.

Դպրոցն իրականացնում է տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր հանրակրթական ծրագրեր:

Դպրոցում ուսուցանվում են ուսպլանով նախատեսված բոլոր առարկաները՝

1. Մայրենի- հայոց լեզու- գրականություն
2. Մաթեմատիկա- հանրահաշիվ- երկրաչափություն
3. Ռուսաց լեզու- անգլերեն
4. Քիմիա- կենսաբանություն
5. Բնագիտություն- ֆիզիկա
6. Աշխարհագրությունն- հայրենագիտություն
7. Պատմություն- հայոց պատմություն- համաշխարհային պատմություն- հայոց եկեղեցու պատմություն
8. Ինֆորմատիկա- տեխնոլոգիա
9. Երգ- երաժշտություն- կերպարվեստ
10. Ֆիզկուլտուրա- առողջ ապրելակերպ
11. ՆԶՊ- շախմատ
12. Հասարակագիտություն- ես և շրջակա աշխարհը

6. Սովորողների թվաքանակը.

Դպրոցում սովորողների թիվը 2022թ-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ 51 աշակերտ, 8 դասարան, նախակրթարանում՝ 5 երեխա:

Առաջին դասարան- 4 աշակերտ

Երկրորդ դասարան- 9 աշակերտ

Երրորդ դասարան- 2 աշակերտ

Չորրորդ դասարան- 5 աշակերտ

Հինգերորդ դասարան- 6 աշակերտ

Վեցերորդ դասարան-4 աշակերտ

Յոթերորդ դասարան- 3 աշակերտ

Ութերորդ դասարան- 4 աշակերտ

Իններորդ դասարան- 4 աշակերտ

Տասերորդ դասարան- 3 աշակերտ

Տասնմեկերորդ դասարան- 3 աշակերտ

Տասներկուերորդ դասարան- 4 աշակերտ

Պարապմունքները դպրոցում միահերթ են, 5-օրյա աշխատանքային պլանով:

7. Խորհուրդները.

Դպրոցում գործում են՝

1.Դպրոցի կառավարման խորհուրդ- անդամ, նախագահ՝ Կ.Մանուկյան

2. Մանկավարժների խորհուրդ- 19 անդամ, նախագահ՝ Հակոբյան

3. Ծնողների խորհուրդ- 8 անդամ, նախագահ՝

8. Դասղեկներ

1ին_3րդ- Դանիելյան

2-րդ- Մաթևոսյան

4-րդ- Վարդանյան

5-րդ_Մովսիսյան

6-7-րդ- Ա.Ներսիսյան

8-րդ_9-րդ- Ղուկասյան Ա.

10-11-րդ- Մ.Ղուկյասյան

12 րդ - Մատինյան

Ֆիզղեկ- Պետրոսյան

Զինղեկ- Հարությունյան

9. Դպրոցավարությանն առնչվող փաստաթղթեր.

Դասացուցակը, ժամանակացույցը, դասղեկների աշխատանքային ռեժիմները, հերթապահների գրաֆիկը և ուսումնառությանն առնչվող փաստաթղթերը կարգավորված և վավերացված են:

Ուսուցիչներն ունեն իրենց թղթապանակները, որոնց մեջ առկա են թեմատիկ պլանավորումները, օրվա պլանները, դասղեկի աշխատանքային պլանները, ամսեկան հաշվետվությունները, աշակերտների ամսեկան առաջադիմության գնահատումները, ինքնագնահատման հաշվետվությունները, թեմատիկ գրավոր աշխատանքները, հարցաշարերը, միջոցառման պլանները, սցենարները:

Հանրակրթության նպատակները և բարեփոխումների ռազմավարությունը.

Կրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է, որը ուղղված է հայ ժողովրդի ու մարդկության հոգևոր ժառանգությունը, գիտելիքներն ու փորձը յուրացնելուն, պահպանելուն, հարստացնելուն և սերունդներին փոխանցելուն:

Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի ու վարվելակերպի ձևավորումը:

Հայաստանում միջնակարգ կրթությունը իրականացվում է 12-ամյա տևողությամբ, եռաստիճան.

Տարրական դպրոց- 4 տարի (1-4-րդ դասարաններ)

Միջին դպրոց- 5 տարի (5-9-րդ դասարաններ)

Ավագ դպրոց- 3 տարի (10-12-րդ դասարաններ)

Գնահատման նոր համակարգ.

Ուսումնական հաստատություններում կիրառվում է գնահատում, որը հանդիսանում է ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց:

Գնահատմամբ պարզվում է սովորողների և դպրոցների կողմից առարկայական չափորոշիչների և պահանջների կատարումը:

Գնահատման հիմնական նպատակը սովորողի գիտելիքների, կարողությունների և անձնային որակների ստուգումն է: Արդեն մի քանի տարի է կիրառվում է 10 միավորանոց համակարգը: Կիրառվում է գնահատման նոր բանաձև. կգ= բ+թ+գ

Արժեքային համակարգի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը: Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները և մասնագիտական վարպետությունը:

Ուսուցանող գնահատում

Ուսուցանող կամ ձևավորող առաջադրանքները դասավանդման կարևոր փուլն են. Թեմայի ուսումնասիրության ընթացքում օգնում են աշակերտին յուրացնելու նյութը, ուսուցչին էլ տեղեկություններ են հաղորդում աշակերտների գիտելիքների ու կարողությունների ձևավորման ընթացքում թույլ տված վրիպումների մասին: Այդ պատճառով ուսումնական նպատակ հետապնդող թեստերին, հարցումներին, ստեղծագործական աշխատանքներին և առաջադրանքներին թվանշային կամ միավորային գնահատական չի տրվում: Ուսուցողական առաջադրանքները թեմատիկներից տարբերվում են քանակական առումով. ուսուցանող առաջադրանքները տատանվում են 1-5 հարցերի սահմանում, բայց բացահայտում են տվյալ թեման գրեթե ամբողջությամբ:

Ներառական կրթություն: Անցում կատարել համընդհանուր ներառականության գաղափարին, նշանակում է հրաժարվել առանձին դպրոցներ ներառական դարձնելու

գաղափարից և ամբողջ համակարգը պատրաստել ներառականության, այսինքն՝ հանրապետության բոլոր դպրոցները ճանաչել ներառական կրթություն իրականացնող: Սա շատ կարևոր քայլ է, որովհետև **ներառական կրթությունը կրթության առանձին տեսակ չէ: Դա կրթության հատկանիշ է, որը ենթադրում է յուրաքանչյուր երեխայի կարիքին համապատասխան կրթության իրականացում: Որքան ավելի շատ է դպրոցում ստեղծված կրթական միջավայրը նպաստում յուրքանչյուր երեխայի կրթության կարիքի արձագանքմանը՝ անկախ նրանից, թե այդ կարիքն ինչպիսի առանձնահատկությունների վրա է հիմնված, այնքան տվյալ դպրոցն ավելի ներառական է:**

Ուսումնական տարեսկզբի նախապատրաստական միջոցառումներ

Աշխատանքի կազմակերպման ժամանակ առաջնորդվել <<Կրթության մասին օրենքի>> և կրթակարգի ընթացիկ ուստարում գործող ուսումնական պլանով, դպրոցում գործող կանոնադրության պահանջներով:

1. Նոր ուսումնական տարում կրթության հետ կապված փոփոխությունների, օգոստոսյան խորհրդակցություններում հնչած նորությունների քննարկում և խորհրդակցություն:

2. Դասարանների կոմպլեկտավորում, դասսենյակների հատկացում, 1ին դասարանի և նախակրթարանի կահավորում:

3. Ստուգել դասասենյակները, հետևել ողջ դպրոցի սանիտարահիգենիկ վիճակին:

4. Կազմել ու հաստատել դպրոցի հենքային ու ուսումնական պլանները, քննարկել մանկխորհում և հաստատել:

5. Հրավիրել մանկխորհրդի նիստ, քննարկել ուստարվա մեկնարկի հետ կապված բազմաթիվ հարցեր ու խնդիրներ:

6. Քննարկում կազմակերպել նոր դասագրքերի, ծրագրերի վերաբերյալ:

7. Գրադարանավարի ու դասղեկների հետ կազմակերպել գրքերի բաշխումը:

8. Բոլոր ուսուցիչներին ապահովել առարկայական պետական ծրագրերով, ձեռնարկներով, մեթոդական ծրագրերով և ուղեցույցներով, նոր տեղեկույթներով:

9. Մանկավարժական խորհրդի որոշմամբ հաստատված ուսումնական պլանի և դասաբաշխման կիրառմամբ կազմել դասացուցակ՝ հաշվի առնելով դասացուցակին ներկայացված մանկավարժների պահանջները:

10. Կազմել դասղեկի ժամերի գրաֆիկը, հաստատել դաստիարակչական աշխատանքային պլանը:

11. Մանկխորհրդի որոշմամբ բաշխել դպրոցական բաղադրիչով հատկացված ժամերը՝ ելնելով անհրաժեշտ պայմաններից:

12. Կազմել ուսուցիչների և աշակերտների հերթապահության գրաֆիկները, աշխատանքային ռեժիմը, թեմատիկ պլանավորումը, օրվա պլանները, միջոցառման պլանները և հաստատել:

Ուսումնական տարվա ընթացիկ աշխատանքներ

1. Կազմակերպել առաջին դասարանցիների մուտքը դպրոց՝ սեպտեմբերի 1-ին:
2. Կազմակերպել խորհրդակցություն ուսուցիչների ու դասղեկների հետ՝ էլեկտրոնային դասամատյանները ճիշտ վարելու վերաբերյալ, դրանք լրացնել ըստ սահմանված կարգի:
3. Կազմակերպել քննարկումներ երկկոմպլեկտ դասարաններում դասի կազմակերպման, արդյունավետ անցկացնելու նոր մեթոդների կիրառման ,օրվա պլանների ճիշտ մշակման, փոխադարձ դասալսումների, փորձի փոխանակման շուրջ:
4. Հետևել, որ ուսուցիչները ճիշտ կազմակերպեն թեմատիկ պլանները, գործնական աշխատանքների թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքների քանակները և ժամաքանակները ճիշտ բաշխեն, հասցեագրումը ընթեռնելի ու մաքուր լինի:
5. Միջոցառումների կազմակերպումը հանձնարարել դասղեկներին, կազմել ժամանակացույցը, օգնել, աջակցել միջոցառումը ըստ պատշաճին անցկացնելու համար (միջոցառումները ըստ ԿԳՄՍ նախարարության ուղեցույցի 1-ին կիսամյակում դադարեցված են):
6. Միջոցառումները տեսագրել, նկարել, ստեղծել դպրոցական ֆոնդ, նաև լուսանկարների պաստառներ և փակցնել հանդիսությունների դահլիճում:
7. Խիստ ուշադրություն դարձնել աշակերտների վարքին և՛ դպրոցում, և՛տանը, և՛ փողոցում ու հասարակական վայրերում:
8. Խիստ ուշադրություն դարձնել աշակերտների բացակայություններին, դասղեկները առանջին թղթերի վրա գրառեն շաբաթական և ամսեկան բացակայությունները, դրանց պատճառները և որ ծնողները պարտադիր տեղեկացնեն բացակայության դեպքում:
9. Կազմակերպել աշակերտների խորհրդի ընտրությունը, հաստատել աշխորհրդի կանոնադրությունը:
10. Հետևել օրագրերի վարման ընթացքին, դասղեկների և ծնողների հետևողական աշխատանքին:

11. Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ, ընտրել ծնողխորհուրդ, նախագահ և դպրոցական ծնողխորհուրդ: Ողջ տարվա ընթացքում համագործակցել ծնողների հետ, նրանց կապը դպրոցի հետ ակտիվ պահել, լուծել առաջացած խնդիրները, թափանցիկ դարձնել դպրոցին առնչվող բոլոր հարցերը:
12. Ծնողական խորհուրդների հետ ծրագրեր կազմել դպրոցին նպաստելու, օգնելու միջոցներ ստեղծել:
13. Պլանավորել դասալսումներ- տառաճանաչությունը 1-ին դ՝ մայրենիից, 2-րդ դ՝ռուսերենից, 3-րդ դ՝ անգլերենից, միջին և ավագ դասարաններում հ. լեզու, գրականություն, պատմություն, հայ. եկ. պատմություն, հասարակագիտություն, անգլերեն, ռուսերեն, ֆիզկուլտուրա, կերպարվեստ, երաժշտություն առարկաներից:
14. Խրախուսել և օժանդակել բաց դասերի, դաս- ներկայացումների կազմակերպմանը:
15. Ստուգել էլ,մատյանի վարման աշխատանքները, լրացումները 10 օրյա ընդմիջումներով, բացթողումները, անճշտությունները քննարկել, գրել գրավոր և զգուշացնել, որ թերությունները վերացնեն:
16. Հետևել տառաճանաչությանը, ընթերցանությանը, թեմատիկ և գործնական աշխատանքների վարմանը և կազմակերպմանը:
17. Կազմակերպել դպրոցական ու տարածքային օլիմպիադաները, կիսամյակային ամփոփիչ աշխատանքները:
18. Հետևել էլ. մատյանի աշխատանքներին, բացառել ուշացած լրացումները:

Տարրական դասարաններ

(1-ին – 4-րդ)

Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է լեզվամտածողությանը և մաթեմատիկական տրամաբանության հիմքերի, ուսումնառության ու աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային ու համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը:

1. Խիստ ուշադրություն դարձնել առողջական խնդիրներին, ճիշտ կազմակերպել նրանց ռեժիմը, հանգիստը, ծանարբեռնվածությունը, պայուսակի չափն ու կշիռը համապատասխանի համ. նորմերին, դասարանի լուսավորությունը, նստարանները համապատասխան լինեն ֆիզիոլոգիական նորմերին:
2. Հետևել տառաճանաչությանը և; մայրենի, և՛ օտար լեզուների բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներին:
3. Ստուգել գրատետրերը, աշխատանքային տետրերը, «Հրաշք» տետրերը, բառարանները, թեմատիկ գր. Աշխատանքները, գործնական աշխատանքների տետրերը, կազմել թղթապանակները:
4. Աշակերտներին մասնակից դարձնել դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, աջակցել դասվարներին «Այբբենարանի հանդեսը» տոնի վերածելու և շուքով անցկացնելու համար:

5. Գրադարանավարի հետ կազմակերպել հեքիաթի ընթերցանության ժամ, շաբաթը մեկ անգամ:
6. Տարրական դասարաններում աշակերտները պետք է սահուն ու գրագետ կարդան՝ հասկանալով կարդացածի իմաստը, գրեն ճիշտ ու անսխալ, հորինեն փոքրիկ պատմություններ, պատմեն, տեսնեն ու գնահատեն գեղեցիկին ու բարին: Գիտելիքներ ունենան օտար լեզուներից, ճանաչեն տառերը, կարողանան ընթերցել ու հասկանան բառերը:
7. Տիրապետեն թվաբանական չորս գործողություններին, խնդիրներ լուծեն, տրամաբանական հարցեր կռահեն:
8. Խիստ ուշադրություն դարձնել գեղագրության, գեղեցիկ ու ընթեռնելի գրելու վրա:
9. Հարգալից լինեն իրենցից մեծերի հանդեպ:
10. Լինեն բարեկիրթ, քաղաքավարի, կոկիկ, մաքուր ու կարգապահ:
11. Հետևել, որ դասվարները դասղեկական ժամերին ուշադրություն դարձնեն աշակերտների բարեկրթությանը, արժեքային համակարգի ձևավորմանը: Լինեն ծնողասեր, հայրենասեր, ազնիվ, արդարամիտ ու բարեսիրտ:
12. Հետևել աշակերտներին տրվող սննդի որակին, մաքրությանը, աշակերտների ճիշտ ու պատշաճ սեղանից օգտվելու կանոններին:

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

2012-13 ուս տարուց դպրոցում գործում է նախակրթարան: Այն իրականացնում է համապատասխան ծրագիր, այստեղ ընդգրկվում են 5-6 տարեկան երեխաներ:

Աշխատանքները, պայմանները կարգավորված են, անցկացվում են միջոցառումներ: Սնունդը տրվում է ամեն օր՝ թարմ ու համեղ:Պայմանավորված կորոնավիրուսով 1-ին կիսամյակում սնունդ չի տրվում.

Ներդրումներ կատանում են և՛ ծնողները, և՛ համայնքը:

Օրվա հերթապահը պետք է հսկողություն իրականացնի սննդի կազմակերպմանը և հանգստի ժամի ճիշտ կազմակերպմանը;

Խրախուսել բաց դասերի և միջոցառումների կազմակերպումը:

Մայրենի, հայոց լեզու, գրականություն

Մայրենի լեզուն սեփական մտքերը, հույզերն արտահայտելու, մարդկանց հետ շփվելու, ունակություններ դրսևորելու միջոց է:Մայրենի լեզուն կրթության լեզուն է: Օտար լեզուների ուսուցումը կազմակերպվում է մայրենի լեզվի հիմքի վրա: ՀՀ պետական լեզուն՝ հայերենը, ազգային խորհրդանիշ է, ազգային անվտանգության երաշխիք:

1. Կրթակարգին համապատասխան, փոխվել ու փոխվում են հանրակրթական դպրոցի դասագրքերն ու ծրագրերը: Նոր գրքերը նոր պահանջներ ու մոտեցումներ են պարունակում: Քննարկել նոր դասագրքերը:

2. Ուշադրություն դարձնել մայրենիի դասավանդման արդյունավետության վրա՝ նոր չափանիշներին ու պահանջներին համապատասխան:
3. Հետևել, որ աշակերտները գրագետ խոսեն, ընթերցանության ու ձեռագրերի որակի բարձրացումն անընդհատ ուշադրության կենտրոնում պահել: Դասի ժամին խոսել միայն գրական հայերենով:
4. Հետևել թեմատիկ ու կիսամյակային գրավոր աշխատանքների կազմակերպմանը, համապատասխանությունը պահանջներին, թեստերի ճիշը կառուցվածքին ու գնահատմանը:
5. Տարվա ընթացքում կազմակերպել բաց դասեր, միջոցառումներ, գրողների հոբելյաններին նվիրված ցերեկույթներ:
6. Հանձնարարել թեմատիկ ու ազատ թեմաներով շարադրությունների մրցույթներ, լավագույնները ըստ շրջաբերականների պահանջների ներկայացնել կրթության վարչություն:
7. Կազմակերպել դպրոցական օլիմպիադաներ, մասնակցել տարածքային ու մարզային փուլերին:

Մասնակցել նաև մարզում կազմակերպվող տարատեսակ գրական միջոցառումներին:

Ռուսաց լեզու, անգլերեն

Օտար լեզուն ոչ հայախոս անձանց հետ շփվելու հիմնական, այլ ժողովուրդների մշակույթին ահողորդակցվելու լրացուցիչ միջոց է: Օտար լեզվի ուսուցման նպատակն է ընդլայնել սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու ունակությունները:

1. Հետևել, որ տարրական դպրոցում աշակերտները տառաճանաչ լինեն, տիրապետեն ծրագրով նախատեսված գիտելիքներին:
2. Հասնել նրան, որ աշակերտները տիրապետեն օտար լեզվի ուղղագրությունը, ուղղախոսության հիմնական կանոնները, անհրաժեշտ բառապաշար ունենան բանավոր ու գրավոր խոսք կազմելու համար:
3. Հետևել, որ ուսուցիչները ուսուցման ընթացքում կիրառեն նոր մեթոդներ, օգտվեն համացանցից: Պահպանել գրավոր աշխատանքների քանակը և ճիշտ կառուցվածքը:
4. Ժամանակին գրանցումներ կատարել dasaran.am-ում: Կազմակերպել բաց դասեր, միջոցառումներ, թատերական ներկայացումներ:

Պատմություն, հայոց եկեղեցու պատմություն, հասարակագիտություն

Պատմությունը քաղաքակրթող և աշխարհայացք ձևավորող հասարակական գիտություն է: Հիմնական նպատակներ համարել սովորեղների կողմից հայոց և համաշխարհային պատմական գործընթացի յուրցումը, մարդկության պատմության մեջ տեղի ունեցած կարևոր իրադարձությունների, երևույթների մասին գաղափար ունենալը:

Հայոց եկեղեցու պատմության դասընթացից իմանալ հայոց եկեղեցու դերը, հայ ժողովրդի պատմական ճակատագիրը, հոգևոր նկարագիրը, ազգապահպանման խնդիրը սերունդներին փոխանցելը:

Հասարակագիտություն առարկայի նպատակն է դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ու բարոյապես ակտիվ, ազնիվ, ազատ, իր իրավունքները գիտեցող անձ ու քաղաքացի:

1. Հետևել որ աշակերտները ունենան տետրեր, գրառումներ կատարեն, քարտեզներով աշխատեն, թեմատիկ ու կիսամյակային աշախտանքները ճիշտ կազմակերպվեն:
2. Աշակերտների մեջ սերմանել հայրենասիրական վեհ զգաղափարներ ու զգացմունքներ:
3. Ամեն օր անդրադառնալ նորություններին, աշխարհում կատարվող իրադարձություններին, վերլուծել ու բանավիճել տարբեր հարցերի շուրջ:

Մաթեմատիկա, հանրահաշիվ, երկրաչափություն

Մաթեմատիկան աշխարհաճանաչման յուրատեսակ ու համընդհանուր միջոց է:

Մաթեմատիկան խթանում է սովորողի հետաքրքրությունները, զարգացնում՝ մտածողությունը:

Ուսուցման հիմնական նպատակն է՝ մաթեմատիկական խնդիրներ ու վարժություններ լուծելու միջոցով խթանել սովորեղի մտավոր ունակությունների զարգացումը, մտածողության ձևավորումը, արագ կողմնորոշվելու կարողությունը: Այս ամենին կնպաստի դասավանդման նոր մեթոդների կիրառումը, նոր տեխնոլոգիաների ներդրումը դասապրոցեսին:

1. Մաթեմատիկայի դերը դպրոցում առաջնային տեղ է գրավում: Խիստ ուշադրություն դարձնել այս առարկայի ուսուցման վրա:
2. Տարրական դասարաններում ճիշտ դնել մաթեմատիկայի, տրամաբանության, դատողության հիմքերը: Տրամաբանական խնդիրներ ու վարժություններ շատ կատարել ու զարգացնել աշակերտների մտածելակերպը:
3. Ինքնուրույն, թեմատիկ և թեստային աշխատանքներին լորջ պատրաստվել, աշակերտների սովորեցնել ինքնուրույն դատել ու մտածել:

Քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա, բնագիտություն, աշխարհագրություն

Այս առարկաների ուսուցման նպատակը բնության երևույթները, օրինաչափություններն ու օրենքներն իմացող, գործնականում կիրառող, բնության ներդաշնակությունը գիտակցող, աշխարհայացք ուեցող անձի ձևավորումն է: Աշակերտները պետք է ճանաչեն կենդանիները, բույսերը, նրանց օրգանիզմների հիմանական հատկությունները: Աշակերտները պետք է կարևորեն բնական գիտությունների դերն ու նշանակությունը:

Ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, ֆիզիկական և աշխատանքի դաստիարակություն

Ֆիզիկական կրթության հիմնական նպատակը ֆիզիկապես առողջ, բազմակողմանի զարգացած, աշխատանքային գործունեությանը նախապատրաստված, առողջ ապրելակերպի կանոններին տիրապետող քաղաքացի ձևավորելն է:

Տեխնոլոգիայի ուսուցումը նպատակաուղղված է սովորողների աշխատանքային հմտությունների ձևավորմանը, կենցաղում աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը և մասնագիտական կողմնորոշմանը:

1. Աշակերտների դաստիարակել մարմնակրթության կարևորության գիտակցումով, նրանց մեջ սերմանել աշախտասիրության զգացում:
2. Ֆիզկուլտուրայի ուսուցչի ու դասղեկների հետ կազմակերպել մրցույթներ, սպորտլանդիաներ:
3. Աշակերտներին գիտելիքներ հաղորդել ֆիզիկական կուլտուրայի, սպորտի, ազգային ու համաշխարհային օլիմպիադաների ու չեմպիոնների մասին: Աշակերտը պետք է ճանաչի իմ մարմինը ու խնամի այն:
4. Տեղյակ լինի տեխնիկայի ու տեխնոլոգիայի զարգացման պատմությանը, իամնա կենցաղում օգտագործվող սարքերի օգտագործման ձևը, պատկերացում ունենա տնային տնտեսության վարման, սննդի, հագուստի պատրաստման հիմունքները:
5. Շախմատը որպես նո րառարկա մուտք գործեց դպրոց 2 դասարաններում: Խիստ ուշադրություն դարձնել նրա դասավանդման պարզ ու հասկանալի, հետաքրքիր դասապրոցես կազմակերպելու վրա:

Շախմատը այս տարի դասավանդում է նոր ուսուցիչ, ով չունի մանկավարժական կրթություն, անցել է վերապատրաստման դասընթաց և ստացել որակավորում: Կազմակերօվել է շախմատի խմբակ, որին մասնակցում են տարբեր դասարանների աշակերտներ:

Հոգևոր և գեղագիտական դաստիարակություն

Գեղարվեստական կրթությունը և գեղագիտական դաստիարակությունը անձի մտավոր և հոգևոր նարուժի բացահայտմանն ու զարգացմանը ուղղված շարունակական գործընթաց է, որն իրականացվում է արվեստի տարբեր տեսակների հաղորդակցվելու և ինքնուրույն գեղագիտական գործունեություն ծավալելու միջոցով:

Աշակերտին լիարժեք քաղաքացի դաստիարակելու համար, բացի ճշգրիտ ու հումանիտար առարկաներից, անհրաժեշտ են հոգևոր ու գետագիտական գիտելիքներ:

1. Բոլոր դասղեկներին հանձնարարել միջոցառումներ կազմակերպել:
2. Դաստիարակել աշակերտների տեսնել ու գնահատել գեղեցիկը, փգտել լավին ու վսեմին, մերժել չարը, աղանդների դեմ պայքարել, սիրել աշխատանքը, արդարությունը:
3. Աշակերտները պետք է տեսնեն ու ընկալեն շրջապատող աշխարհի գեղեցկությունն ու բազմազանությունը, ընկալեն ,ինքնուրույն վերլուծեն արվեստի բովանդակությունը, մասնակցեն դպրոցի մշակութային կյանքին:
4. Արդյունավետ օգտագործեն ազատ ժամանակը, զգայուն ու ուշադիր լինեն ճաշակ ձևավորելու վրա:
5. Օգնեն, աջակցեն օգնության կարիք ունեցողներին, ուշոդիր լինեն շրջապատում ծերերի, երեխաների հանդեպ:

6. Ճանաչեն հայոց եկեղեցին, տոները, ավանդույթները, մասնակցեն դպրոցում կազմակերպվող կրոնական միջոցառումներին:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն, ՆԶՊ, առաջին բուժօգնություն

ՆԶՊ առարկայի նպատակն է հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի ձևավորել: Աշակերտները պետք է ծանոթ լինեն հայոց բանակի պատմական ավանդույթներին, ՀՀ զինված ուժերի խնդիրներին, պատկերացնեն հայրենիքի պաշտպանության, զինվորական կարգապահության պահանջները: Ճիշտ կողմնորոշվի արտակարգ իրավիճակներում, ունենա բարոյական հատկանիշներ, լինի հայրենասեր, ընկերասեր, օգնության հասնելու պատրաստակամություն, համարձակություն դրսևորի:

1. Հասնել նրան, որ աշակերտը՝ ապագա զինվորը, կարևորի բանակում ծառայելը, սիրի հայրենիքը, երկիրը, մտածի այն զորացնելու ու հզորացնելու մասին, իր մասնակցությունն ապահովի այդ գործին՝ նվիրական ու սուրբ գործին:
2. Հետևել, որ դասղեկները իրենց դաստիարակչական պլաններում ընդգրկեն զրույցներ, միջոցառումներ հայրենասիրական, բանակային թեմաներով:
3. Դասղեկների, գրականության և պատմության, ռազմագիտության ուսուցիչների հետ կազմակերպել միջոցառումներ ու քննարկումներ անցկացնել հայրենիքի ու հայրենասիրության թեմայով:

Դաստիարակչական աշխատանք

Դասղեկների մանակվարժական գործառույթներից առաջնայինը համարվում է դաստիարակության գործառույթը: Դասղեկը պետք է միավորի դասավանդող բոլոր ուսուցիչների ջանքերը: Մեկ այլ կարևոր գործառույթ է երեխայի սոցիալական պաշտպանության գործառույթը, նրան շրջապատող միջավայրի անբարենպաստ ազդեցությունից պաշտպանելը:

Դասղեկն է ծրագրում երեխաների գործունեությունը՝ ճանաչողական, աշխատանքային, գեղագիտական ժամանցի անցկացումը: Դասղեկի մեկ այլ գործառույթ է աշակերտական ինքնակառավարման խթանումը, ինքնութույնության ձևավորումը: Դասղեկը պետք է հետևողական լինի երեխայի անձն ու անհատականությունը ձևավորելու մեջ:

1. Հետևել դաստիարակչական աշախտանքների պլանավորումներին, ուղղություն ցույց տալ, շտկումներ կատարել:
2. Հետևել, որ դասղեկը մշտական կապի մեջ լինի ծնողների հետ՝ միասին լուծելու բոլոր ծառացած խնդիրները:
3. Հետևել օրագրերի վարման վիճակին, բոլոր գնահատականները պետք է անցկացվեն օրագրերի մեջ, ծնողները պետք է հետևեն օրագրերին::
4. Պետք է կարգի բերեն կազմակերպչական անկյունները, դասարանները կահավորվեն առարկայական պաստառներով:

5. Աշակերտական ժողովներ հրավիրվեն, քննարկումներ կազմակերպեն:
6. Ընտրել ու կազմակերպել աշակերտական խորհուրդ, հաստատել կանոնադրությունը, կազմակերպել միջոցառումներ:
7. Դասղեկի ժամը պետք է լրացնել դասամատյանում հատկացված բաժնում:էլ.մատյանում չի լրացվում,քանի որ ֆինանսական անհամապատասխանություն է ցույց տալիս,